# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 օգոստոսի 2026թ. թիվ 649-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԹԻՎ 555-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության» կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 5-րդ կետի 3)-րդ ենթակետը և 11-րդ կետը, հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարցի Ա.Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 27.08.2026թ. թիվ 33-26 գրությունը՝

Ո ր ո շ ու մ  եմ.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2024թ. օգոստոսի 15-ի «ՀՀ Լոռու մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների միասնական խորհուրդների կազմերը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի թիվ 231-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 555-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

«9.5. ՀՀ Լոռու մարզի Մարցի Ա.Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ» մասում «Բարսեղյան Ռուզաննա» բառերը փոխարինել «Նիազյան Ալլա» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Recoverable Signature

X

Ստորագրող
ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ
2414880046

2026-08-27 17:13:52 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: GHARIBYAN ARSEN 2414880046 Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. օգոստոսի 27
ք.Վանաձոր